ՌԱՀՀԿ ԱՄՍԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

5
Մայիս 2010

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

Լույս տեսավ ՌԱՀՀԿ լրատուի հինգերորդ համարը
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) հունվարին մեկնարկ տվեց նոր ամսական լրատուների շարքի: Այժմ հրապարակի վրա է ՌԱՀՀԿ լրատուի հերթական համարը, որը համառոտակի ներկայացնում է 2010թ. մայիսին մեր իրականացրած գործունեությունը եւ ծրագրերը:

ՌԱՀՀԿ-ի գործունեությունը եւ ծրագրերը

Կենտրոնը մասնակցեց Բրյուսովի համալսարանի «աշխատանքի ցուցահանդեսին»

Մայիսի 15-ին ՌԱՀՀԿ աշխատակիցներ Մարինա Աբրահամյանը, Աշխեն Մուշեղյանը եւ Ռիչարդ Կիրակոսյանը Կենտրոնը ներկայացրին «աշխատանքի ցուցահանդեսում», որը կազմակերպել էր Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը: ՌԱՀՀԿ-ի տաղավարում Կենտրոնի աշխատակիցները այցելուներին բաժանեցին Կենտրոնի ամենահեղինակավոր վերլուծություններն ու հրատարակությունները:

ՌԱՀՀԿ-ն տեղեկատվություն տրամադրեց այցով Հայաստանում գտնվող OXFAM-ի պաշտոնյաներին

Մայիսի 19-ին Կենտրոնը հյուրընկալեց «OXFAM ինտերնեյշնլ» հասարակական կազմակերպության լոնդոնյան գլխավոր գրասենյակից այցով Հայաստանում գտնվող ավագ պաշտոնյաներին: Հանդիպման ընթացքում ՌԱՀՀԿ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը հյուրերին պատմեց Հայաստանում եւ տարածաշրջանում ընթացող տնտեսական եւ քաղաքական վերջին իրադարձությունների մասին:

Կենտրոնի տնօրենը ելույթ ունեցավ տարածաշրջանային խորհրդաժողովում

Մայիսի 21-22-ը ՌԱՀՀԿ տնօրենը մասնակցեց Կովկասյան ինստիտուտի հովանու ներքո Երեւանում անցկացված երկօրյա խորհրդաժողովին: «Կովկաս-2009. գլխավոր միտումները» խորագրով միջոցառմանը մասնակցեցին առաջատար փորձագետներ Վրաստանից, Ռուսաստանից եւ Թուրքիայից: Խորհրդաժողովում Կիրակոսյանը զեկույց ներկայացրեց՝ նվիրված 2009թ. Հայաստանում տեղի ունեցած քաղաքական եւ տնտեսական իրադարձություններին:

ՌԱՀՀԿ-ն ուսանողների եւ երիտասարդ համակիրների համար անցկացրեց հատուկ աշխատանքային սեմինար

Մայիսի 24-ին Կենտրոնը ուսանողների եւ երիտասարդ համակիրների համար կազմակերպեց երկու մասից բաղկացած հատուկ աշխատանքային սեմինար: Միջոցառման առաջին մասը նվիրված էր հայաստանյան քաղաքական քարոզարշավներում «քաղաքական գործիքակազմերի» կիրառմանը՝ այդ թվում քաղաքական ուղերձների, կարգախոսների եւ պատկերների ստեղծմանը: →

← Հատուկ աշխատանքային սեմինարի երկրորդ մասը բաղկացած էր քաղաքացիական եւ քաղաքական ակտիվության մեջ հասարակական ցանցային տեխնոլոգիայի օգտագործմանը նվիրված քննարկումից: Մի քանի տասնյակ ուսանողներ ու երիտասարդ համակիրներ մասնակցեցին այս միջոցառմանը, որը ՌԱՀՀԿ հատուկ սեմինարների վերջին շարքից էր եւ նպատակ ուներ վարժանքներ անցկացնել բազմազան բնագավառներում՝ ներառյալ հետազոտությունների, վերլուծությունների ու գրելու արվեստի, ինչպես նաեւ զեկույց ներկայացնելու եւ բանավիճելու ունակությունների ոլորտները:

Կենտրոնի անձնակազմը մասնակցեց ռուսական սեմինարին

Մայիսի 24-ին ՌԱՀՀԿ վարչական տնօրեն Կարապետ Կալենչյանը եւ ավագ փորձագետ Մանվել Սարգսյանը Կենտրոնը ներկայացրին Երեւանում անցկացված՝ «Իրավիճակը Կովկասում եւ տարածաշրջանային անվտանգության տեսանկյունը» խորագրով սեմինարում: Միջոցառմանը, որը կազմակերպել էր Մոսկվայի ԱՊՀ երկրների ինստիտուտը, Սարգսյանը ներկայացրեց Լեռնային Ղարաբաղին նվիրված պաշտոնական զեկույց:

ՌԱՀՀԿ-ը ներկայացրեց հատուկ վերլուծություն՝ նվիրված մի շարք երկրների վերջին անցքերին

Մայիսի 26-ին Կենտրոնը կազմակերպեց հատուկ քննարկում, որի ընթացքում մի շարք երկրների վերջին զարգացումների լույսի ներքո գնահատական տրվեց Հայաստանի համար այդ իրադարձությունների հնարավոր հետեւանքներին: Միջոցառման ընթացքում ՌԱՀՀԿ տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը վերլուծեց Թաիլանդի վերջին քաղաքական խմորումները, Հունաստանի տնտեսական ճգնաժամը, ղրղզստանյան տեւական անկայունությունը եւ Իրանում շարունակվող քաղաքական ճգնաժամը:

Քննարկմանը մասնակցած ավելի քան 20 հյուրերի թվում էին ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար Սերգեյ Կապինոսը, ինչպես նաեւ ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների ու առաքելությունների այլ աշխատողներ, ուսանողներ, վերլուծաբաններ եւ լրագրողներ:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

Կենտրոնն անցկացրեց տարածաշրջանային զարգացումներին նվիրված քննարկում՝ առանց հղումների

Մայիսի 27-ին ՌԱՀՀԿ տնօրենը Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական անձնակազմի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացրեց առանց հղումների քննարկում՝ նվիրված Հայաստանում եւ տարածաշրջանում ներկայում ընթացող զարգացումներին: Ամսական քննարկումների շարքից այս չորրորդով ՌԱՀՀԿ-ը Հայաստանում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպություններին եւ դիվանագիտական առաքելություններին տրամադրում է Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ անվտանգության հարցերի վերլուծությունների ու տեղեկատվության անկախ աղբյուր, ինչպեսեւ հավելյալ վերլուծություններ տարածաշրջանային հիմնախնդիրների եւ միտումների վերաբերյալ:

Ոչ պաշտոնական քննարկման մասնակիցների թվում էին ՀՀ-ում Լիտվայի դեսպան Գիեդրիուս Ապուոկասը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար Սերգեյ Կապինոսը, Եվրախորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Սիլվիա Զեհեն, ՀՀ-ում Իտալիայի, Ռումինիայի, Լեհաստանի եւ ԱՄՆ-ի դեսպանատների, ՄԱԿ-ի, Հայաստանում Եվրամիության խորհրդակցական խմբի, Ամերիկայի հայկական համագումարի եւ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչները:

ՌԱՀՀԿ-ը երիտասարդ համակիրների համար անցկացրեց նախապատրաստական հատուկ քննարկում

Եվրախորհրդի կողմից Հայաստանի, Ադրբեջանի եւ Ղարաբաղի երիտասարդ ակտիվիստների կազմակերպվելիք հանդիպման շրջանակներում մայիսի 28-ին Կենտրոնը նախապատրաստական քննարկում անցկացրեց հայաստանցի ու արցախցի մասնակիցների համար: Միջոցառման ընթացքում ՌԱՀՀԿ տնօրենը մասնակիցներին տեղեկություններ տրամադրեց ղարաբաղյան հակամարտության գլխավոր հարցերի վերաբերյալ եւ բանավիճելու ու բանավոր զեկույց ներկայացնելու ունակություններին նվիրված գործնական վարժանք անցկացրեց:

ՌԱՀՀԿ տնօրենը զեկույց տվեց Հայաստանի «Առաջնորդների դպրոցի» շրջանավարտներին

Մայիսի 29-ին Ռիչարդ Կիրակոսյանը գլխավոր զեկուցողն էր Հայաստանի «Առաջնորդների դպրոցի» 2010թ. շրջանավարտմանը նվիրված միջոցառման ժամանակ: Կենտրոնի աշխատակազմը ակտիվորեն աջակցում է այս դպրոցին՝ պարբերաբար հանդես գալով դասախոսություններով եւ անցկացնելով քննարկումներ:

ԶԼՄ-ների հետ հարաբերությունները

ՌԱՀՀԿ ավագ փորձագետը հարցազրույց տվեց ռուսաստանյան լրատվական գործակալությանը

Кавказский Узел

Մայիսի 18-ին «Կավկազսկի ուզել» («Կովկասյան հանգույց») ռուսալեզու էլեկտրոնային լրատվական գործակալությունը հարցազրույց ունեցավ ՌԱՀՀԿ ավագ փորձագետ Հովսեփ Խուրշուդյանի հետ: Այդ նյութը հասանելի է հետեւյալ հասցեով՝ http://armenia.kavkaz-uzel.ru:80/articles/168970/

ՌԱՀՀԿ-ին հղումներ արեցին «Նյու Յորք թայմսը» եւ «Ինտերնեյշնլ հերըլդ թրիբյունը»

The New York Times
International Herald Tribune

Մայիսի 26-ին «Նյու Յորք թայմս» եւ «Ինտերնեյշնլ հերըլդ թրիբյուն» օրաթերթերը հրապարակեցին «Թուրքիան գնում է նոր հավակնոտ արահետով» խորագրով հոդված, որում հղում արվեց ՌԱՀՀԿ-ին: Սա երկրորդ անգամն է, որ առաջատար այս պարբերականները վկայաբերում են Կենտրոնի տեսակետը:

Կենտրոնի առաջիկա միջոցառումները

ՌԱՀՀԿ կլոր սեղանի շուրջ քննարկում՝ նվիրված տարածաշրջանում ռազմական անվտանգության հարցերին

Կենտրոնը նախատեսում է հունիսի 16-ին անցկացնել կլոր սեղանի շուրջ քննարկում, որի ընթացքում կարծարծվեն տարածաշրջանում ռազմական անվտանգության վերջին զարգացումները, գնահատական կտրվի ուժերի հավասարակշռության խնդիրներին, պաշտպանության ու անվտանգության բնագավառների բարեփոխումներին եւ Թուրքիայում, Ադրբեջանում ու Վրաստանում առկա ռազմաքաղաքացիական հարաբերություններին:

Կենտրոնի առաջիկա հրատարակությունները

«ՌԱՀՀԿ-ի հայաստանյան քաղաքականության տարեգիրք-2010»

Կենտրոնի աշխատակիցներ Մարինա Աբրահամյանը, Աշխեն Մուշեղյանը եւ Լիլիթ Սարուխանյանը իրականացնում են առաջին անգամ հրատարակվելիք տարեկան ամփոփիչ գրքի պատրաստման հետազոտական աշխատանքները: «Հայաստանյան քաղաքականության տարեգիրք-2010» խորագիրը կրող այս հրատարակությունը մեծապես կծառայի իբրեւ կարեւոր հիմնաղբյուր եւ ընթերցողների դատին կհանձնի ՀՀ քաղաքականության բոլոր դիտանկյուններն արծարծող հարուստ տեղեկանյութ եւ վերլուծություններ:

Վերջին հոդվածներն ու զեկույցները

Մայիսի 25-ին Կենտրոնը հրատարակեց ռուսալեզու երկու նոր հոդվածներ: Առաջին աշխատանքը պատրաստված է ՌԱՀԿԿ ավագ փորձագետ Մանվել Սարգսյանի կողմից եւ կրում է «Միջազգային իրավունքը չի կարող լինել հաշիվներ մաքրելու քաղաքական մեխանիզմ» խորագիրը: Իսկ «Նոր աշխարհի կառուցման գործում առաջատար երկրների աշխարհաքաղաքական դերը» վերտառությամբ հոդվածի հեղինակը ՌԱՀՀԿ վարչական տնօրեն Կարապետ Կալենչյանն է: Երկու զեկույցներն էլ կարելի է ներբեռնել Կենտրոնի հետեւյալ կայքէջից՝ www.acnis.am/main

Հավելյալ տեղեկություն մեր մասին

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը 1994թ. հիմնադրել է ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանը՝ արժանանալով հայաստանյան եւ Սփյուռքի աջակիցների լայն շրջանակների զորակցությանը: Հետեւելով համաշխարհային զարգացումներին, գիտելիքների հիմքեր խարսխելով, հանրության հետ երկխոսություն ծավալելով՝ Կենտրոնը հետխորհրդային տիրույթում հանդես է գալիս որպես երկրաքաղաքական ստեղծագործական մտածողություն ձեւավորող եւ միջազգային միջավայրի համապարփակ ընկալմանը նպաստող ուժ: Վերջին շրջանում Կենտրոնն առաջնահերթ տեղ է հատկացնում տարածաշրջանային անվտանգության ու համագործակցության, քաղաքացիական կրթության, պետության եւ ազգի համար վճռորոշ՝ ներքին ու արտաքին քաղաքականությունների կիրառական հետազոտությանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՌԱՀՀԿ՝ Երեւան, Երզնկյան 75, հեռախոս՝ (37410) 528-780 կամ 274-818, հեռապատճեն՝ (37410) 52-48-46, էլ. փոստ՝ root@acnis.am եւ info@acnis.am, կայքէջ՝ www.acnis.am:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն
Խմբագիր՝ Ռիչարդ Կիրակոսյան
Ձեւավորումը՝ Աշոտ Թուրազյանի